

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ.:

Փոփոխում գրվում են խմբագրատանը և պ. Ծառուկեանի խանութում:

Պատրաստողացիք գիտե՛ք, որ ռուսական
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարվում են
խրախուսիչ բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1878 Թ.Կ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԸՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից:

1 ըրորի դիւրը և պրօգրամման նոյն են մնալու: Մենք կը ստանանք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌԵԳԻՐՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ. է, կէս տարվանը 6 ռուբլ.: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆ մէջ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում:

ԸՄԵՆՁԻՆ ՀԵՐԵԳԻՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպէկով հատը: Օտար քաղաքներից պէտք է գիտել հետեւեալ հասցեով՝ ТИФЛИСЬ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր վերջին պատասխանը «ՕՅՈՐԻ» լրագրին: — Ներքին տեսութիւն, ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն, Պապերի թաղման հանդիսի սովորական արարողութիւնները: Արտաքին լուրեր: — «Մշակի» հեռագիրները: Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց: — Բանասիրական կ'աշխատե՛ք: Նամակ Գերմանիայից:

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ՕՅՈՐԻ» ԼՐԱԳՐԻՆ

Նշուողի թողնելով «ՕՅՈՐԻ» լրագրի հակասութիւնները, նրա անշափ մեծ ինքնահասանութիւնը, թողնելով այն որ նա ուրիշներին մեղադրում է թէ անձնաւորութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԿԱԳԵՐԱՆԻԱՑԻՑ

Լայպցիգ փետր. 1878

Փետրվարի 6-ին, բացվեցաւ գերմանական Բայ-խառաքը, որը այս անգամ խոստանում է սովորականից աւելի աշխոյժ և գրգռված լինելու, որովհետեւ մինչդեռ անցեալ տարի բոլորեքնանք զանգատվում էին վեճաբանութեան նիւթի պակասութեան համար, այս անգամ ընդհակառակը հարցեր հաւաքված զիջված են, միայն աշխատանք և եռանդ է պահանջվում նոցա քննելու: Այսպէս ուրեմն այդ օրով սկսում է Գերմանիայում պարզանալու նոր տարին:

Բայց որպէս անցաւ անցեալ տարին, այդ է հարցը, որի պատասխանը այս անգամ կը կարգէ մեր յօդուածի նպատակը: Այդ պատասխանը անշուշտ հարկաւոր է գիտենալ, ով կամենում է հետեւել Գերմանիայի ընթացող ներքին և արտաքին պրօգրամման ընթացքին: Գորահով միայն ընթերցողը նաև կը ծանօթանայ տեղեկանքներին գործերի դրութեան հետ, որոնք օտարին գուցէ անծանօթ լինեն, որովհետեւ նոցա վրա արժանի ուշադրութիւնը չեն դարձնում առհասարակ մանաւանդ այս ժամանակ, երբ արեւելք բոլորի ուշք ու միտքը դէպի իրան է գրաւել:

77 թիւը Եւրոպայի համար առհասարակ մի

թիւներին են դիպում, իսկ ինքն առաջինն է որ այդ անում է, — մենք ուղղակի կանցնենք յօդուածների դրական կողմին:

Պ. Նիկոլաձէ շատ ուղիղ է ասում որ բաւական չէ մի բանի ժամանակ անցկացնել Լիւթաւյում ուսում առած համարվելու համար: Եւ այդ շատ ուղիղ միտք է և մենք կարող ենք օգնել պ. Նիկոլաձէին նրա դատողութիւնները ընդարձակելով և բերելով շատ հետաքրքիր իրողութիւններ և էպիզոդներ կովկասեան ուսանողների արտասահմանեան կեանքից (մինչև

շատ, այս, շատերի համար կարելի է ասել մի անիծեալ տարի էր: Ռուսաստան, թիւրքիա, Ֆրանսիա, Անգլիա, Աւստրո-Ունգարիա... մինչ մեծ, միւսը փոքրը, խօսքը զրանում չէ, բայց բոլորեքնանք էլ կրկնապէս մէջն էին: Գերմանիան այդ կողմից ընդհանուրից բացառութիւն չէր կազմում, Համարեա մի տարի ամբողջապէս Գերմանիայում տիրում էր, առ այժմ էլ տիրում է, քաղաքական կրկնապէս, որը տիրութեան կանցելի (րայականցել) անձնաւորութեան հետ այնքան սերտ կապ ունէ, որ նա կոչվում է «կանցելի-կրկնապէս»:

Այդ կրկնապէս ունի մեծ մասամբ տնտեսական գոյն, բայց դա միակ չէ, այլ առհասարակ ներքին քաղաքականութիւնը մի շատ տհաճ և անաշուղ շող դրութեան մէջ էր: Ամենքը գտնում են, որ ներքին գործերում հարկաւոր է մեծ, այս, արմատական փոփոխութիւններ անել: Ինչ փոփոխութիւններ — այդ արդէն մի հարց է: Թէ ինչ միջոցներով պէտք է այդ փոփոխութիւնները և այնպիսի նոր պայմաններ իրագործել: — այդ արդէն երկրորդ հարց է և մէկը միւսից դժուարագոյն: Գուցէ ոչ մի երկրում այնքան դժուար չէ տնտեսական և ֆինանսական ընթացքներ անել, որքան Գերմանիայում: Եթէ մի երկրում մի ընթացք իրագործելու կարող է այս կամ այն քաղաքական կուսակցութիւնը արգելել, Գերմանիան այդ կուսակցութիւններից զերծ չէ և բացի դրանից իւրաքանչիւր մի գործնական գաղափար պէտք է ոչ աւել և ոչ պակաս, քան 25 տնտեսութիւնների կամերին համապատասխանէ, որոնցից բաղկացած է այժմեան գերմանական կույսերութիւնը...

անգամ քաղաքաւոր անելով լրագիրներից) որտեղից ընթերցողը կը կարողանայ իրան մի գաղափար կազմել թէ մեր Կովկասեան ուսանողներից ոմանք որքան անգործ և անբարոյական կերպով ժամանակ են անցկացրել արտասահմանում և որքան մի բանի դէպքերում աշխուժ են վարվել օրինակ ուսանողական կասաների հետ և այլն... Եւ այդ կողմից կատարելապէս համաձայն ենք պ. Նիկոլաձէի հետ, թէ և իրաւանք չենք ճանաչում նրան քննադատել սորա կամ նորա առողջ դատողութիւնը, չափել սորա կամ նորա հմտութիւնները: Դորա համար հարկաւոր է որ ինքն պ. Նիկոլաձէ աւելի առողջ դատողութիւն, և աւելի հմտութիւններ ունենար, — իսկ այդ երկու բանն էլ բաւական թոյլ են նրա մօտ...

Բայց երկու բանի մէջ մենք համաձայն չենք նորա հետ՝ նախ նորա հայեացքի հետ մեր հայոց ինտելեկտիւների վրա, և երկրորդ մեր տեղական լրագրութեան մասին «ՕՅՈՐԻ» լրագրի ունեցած կարծիքների հետ:

Մեր ինտելեկտիւներն ոչ թէ այն պատճառով անտես էր առնում «Մշակ» լրագիրը, որ նրա

ուղղութիւնը համապատասխան չէր մեր լուսաւորված դասի լայն պահանջներին: Ոչ պատճառները ուրիշ են: Նախ, պէտք է ասել որ մեր ինտելեկտիւների մեծ մասը կամ հայերէն չը գիտէ, կամ եթէ գիտէ ամաչում է խօսել և կարգալ հայերէն: Երկրորդ որ մեր ինտելեկտիւներն ամեն լրագրից պահանջում է ոչ թէ ծանր, մըշակված, օգտաւետ յօդուածներ, այլ սորա կամ նորա վրա բամբասաններ, քաղաքային սկանդալներ: Դորանով բացատրվում է թէ ինչի ուրիշ մի բանի լրագիրներ լաւ ընդունելութիւն ունեցան մեր լուսաւորված անուանեալ դասի մէջ, իսկ «Մշակը» աճողութիւն չունեցաւ նոյն անձների շրջանում: Եւ պարզապէս որ այդ է գրաւում միայն մեր ինտելեկտիւներին, որ միակ անգամ երբ «Մշակի» մէջ տպվեցաւ պամֆլետի պէս մի բան «Դանալալման» վերնագրով, այդ գրքովածը կարգաց ամբողջ թիֆլիսը, կարծելով թէ նա սորա կամ նորա վրա է գրված: Եւ այն ժամանակ յայտնվեցաւ որ նոքա, որոնք ամենքին ասում էին թէ մի խօսք հայերէն չը գիտեն, շատ լաւ հասկացան մեր ֆելիետոնը: Եթէ մենք վեց տարվայ ըն-

բոլորն էլ հիմնած էին միայն կիսակտոր, անհաստատ կարծիքների վրա:

Սկզբում կարծում էին, թէ պատճառը պէտք է լայնականցելի և նաւատորմի միջնատր ֆոն Շտոյի մէջ եղած տարաձայնութիւնների մէջ որոնել, բայց այդ տարաձայնութիւնները կայսրի միջնորդութեամբ ոչնչացան: Միւսները կարծում էին, թէ պատճառը զանազանութեան խորհրդի (բունդսթագ) վճիռն է, որի գործութեամբ լայպցիգը և ոչ Բերլինը կը լինի Գերմանիայի վերագոյն դատաստանի տեղը: Միւսները նկարագրում էին այն հանգամանքը, իբրեւ թէ Բիսմարկը ճշնչվում է կայսերական տան պատկանող մի քանի անձներից, որոնք այնքան երկիրաւոր են անգամ, որ զոցա պատճառով Բիսմարկի բոլոր քաղաքական պայմանները իրագործվելու անկարող կը լինեն: Այս, յօդուածներ երեքնան, որոնք իրանց իրաւացի թէ անիրաւացի մեկնութիւնների մէջ համարձակվեցան անգամ կայսերական գերագատանի անգամներին այդ գործի մէջ խառնել...

Ինչպես Բիսմարկը բանի տեղ չէր դնում մամուլի բացատրութիւնները և կարծիքները, այնպէս որ մինչ այժմ էլ դեռ իսկ յայտնի չէ, թէ ինչ հանգամանքներ արգելեցին նրան գործերի կրկն ընդունելը: Շատերը կարծում են իսկապէս, որ դրա պատճառը նրա անառողջ գրութիւնն է և (գուցէ ամենազիջաւորը) Գերմանիայի ընդհանուր ներքին քաղաքական խառն դրութիւնը: Ինչպես Բիսմարկը ինքը պահանջողական (կոնսերվատիւ) մարդ էր, բայց յետոյ անցնելով մի քանի փաստերի ոյժով, նաև հեռաւոր սեղով իր ապագայ ներքին քաղաքականութեան վրա, Բիսմարկը ստիպված է օգտատմիտ, լինե-

Թնդացն ում են քաղաքը զանգակի տխուր հնչույթներով:

Իսկոյն իմաց են տալի պապի մեռնելը Հռոմից դուրս բնակվող կարդինալներին և հրաւիրում են շուտով գալ այնպէս անուանված յաւիտենական քաղաքը:

Աւելի հին ժամանակներ սովորութիւն էր որ պապի մեռած ժամանակ տեղական իշխանութիւնների բոլոր պաշտօնները դադարում էին, Հռոմի բանտերը բացվում և թէթեւ յանցանքով դատաւարութեանը արձակվում էին: Հռոմ բնակելը վտանգաւոր էր դառնում մինչև նոր պապի ընտրվելը որովհետև այն ժամանակ խռովութիւններ, ապստամբութիւններ, գողութիւններ էին լինում և ամեն շարագործութիւն մնում էր անպատիւ:

Պապի մեռնելուց 24 ժամ յետոյ, պապի վերաբոյժները սկսում են զննել նրա մարմինը: Սիրտը հանելով գնում են մի սափորի մէջ որը մեծ գոլշութեամբ կրնա քաճ, տանում են սրբոց Վիկենտի և Անաստասի եկեղեցին յատուկ մի շքեղ կառքի մէջ դրած, որի հետ գնում են սպասուորներ, ջահեր բռնած իրանց ձեռքում: Այդ եկեղեցու հողերականները հանդիսով ընդունում են պապի նշխարները, մանաւոր արարողութիւններով կարգում են աղօթքներ և դնում են սափորը յատկապէս շինված մի գերեզմանի մէջ: Իսկ մարմինը, սպիտակ կրտաւից մի վերարկու հագցրած, դնում են Վատիկանի Սիքստին մատուռի մէջ մի շքեղ անկողնի վրա որի ոտքում դրվում են պապական երկու զէլտարներ: Պապի պահպանները հսկում են նրա բոլորովը և կղերականները աղօթում են:

Հետեւեալ օր առաւօտեան, պապի մարմինը վրա աղօթող հոգեւորականները տանում են նրան և դնում են Վատիկանի գլխաւոր մատուռի ժողովատեղը կարդինալների առաջ որոնք իրանց մանիշակագոյն մետաքսից գործված նշանները դրած են լինում: Երգիչները սկսում են տխուր երգեր և ութ մարաւնապետներ վերցնում են անկողնի որի վրա դրած է պապի մարմինը և ներկայ եղող բոլոր հոգեւորականների և կարդինալների հետ միասին գնում են Վատիկանի գլխաւոր եկեղեցին, սաղմոսներ և հոգեհանգստեան աղօթքներ: Այնտեղ դնում են մարմինը մի սղապտոյ բայց շատ շքեղապէս զարդարված անկողնի վրա: Մի արքեպիսկոպոս աղօթքներ կարդալուց յետոյ, տանում են մարմինը Ս. Հաղորդութեան մատուռը ուր մնում է երեք օր մի բարձրաւանդակի վրա, պապի զգեստներով և նշաններով զարդարած: Մարմինը այնպէս են տեղաւորում այդտեղ ուր Ս. Պապի ոտքերը դուրս են ընկնում մատուռի դրան վանդակապատներից և հաւատացեալների մեծ բազմութիւն գնում է այդ երեք օրվայ միջոցին և մեծ շքեղութեամբ համբուրում է պապի ոտքերը, որովհետև ինքն ժողովուրդը չի արժանանայ պապի կենդանի եղած ժամանակ նրա ոտքեր անգամ համբուրել: Կարդինալներ և բարձրաստիճան մարդիկ հազիւ կարողանում են արժանանալ:

Երրորդ օրվայ երեկոյն, վախճանած պապից ընտրված կարդինալները, մանիշակագոյն մետաքսից մի զգեստ հագած, միւս հոգեւորականների հետ գնում են Ս. Հաղորդութեան մատուռը և այն տեղից մատրանապետները տանում են Հրեշտակաց դաւ անուանված մատուռը ուր կարդինալները գալով, օրհնում և խնկարկում են մարմինը: Եւտոյ օրհնում են նոճից է շինված դադարը որի մէջ տրվում է մարմինը: Այն ժամանակ մատրանապետները դնում են պապի մարմինը և քահանայապետական զարդերը մի մեծ կարմիր պատանքի վրա և ամենը միասին դնում են դադարի մէջ: Երեք քսակ որոնց մէջ լինում են վախճանած պապի տարբեր թուր և քաղաքի ներ (médaillé) ոսկուց, արծաթից և պղնձից և մի թէթեղէն տուփ որի մէջ լի-

նում է մի մազադաթ, վրան գրված վախճանած պապի գլխաւոր գործերը, միասին դրվում են դադարի մէջ: Վախճանած պապի ձեռնադրած առաջին կարդինալը ծածկում է նրա գլուխը սպիտակ քօլով, նոյնպէս ձեռքերը և մի մեծ կարմիր պատանք դնում է նրա մարմնի վրա:

Յետոյ նոճուց շինված դադարը կնքվում էրվում է կապարից շինված մի դադարի մէջ և յետոյ երկուսը միասին մի փայտէ դադարի մէջ որը կնքում է պապի գլխաւոր սենեկապետը, տան վերակացուն և կանոնիկոսը: Այնուհետև փոխադրում են այն մատուռը ուր հանդուս էր իր նախորդ պապը որի նշխարները արդէն երեկոյն տարած են մայր եկեղեցու գեանափորերը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լուսնոյն հեռագրում են փետրվարի 1-ին, որ Անգլիան չէ համաձայնում որ թիւրքերի նաւատորմը արվի ռուսներին պատերազմական ծախսի հաշուով, այն հիման վրա, որ թիւրքաց նաւերը գրաւ են դրած անգլիական բանկիրների մօտ:

— «Հալլասի ընկերութեանը» հեռագրում են Աթէնքից փետրվարի 13-ին, որ յունաց կառավարութեանը յայտնելով պետութիւններին թէ սալիայում կատարված սպանութիւնների մասին, բողոքում է այն վտանգաւոր դրութեան դէմ, որի մէջ գտնվում են թիւրքիայի յունաց նահանգները, և ասում է որ ինքը ստիպված է խառնվել այս պատերազմում: Մօտ 700 ապստամբներ իսկզեկի առաջնորդութեամբ ամրացան Մակրինիցում, Վօլի մօտ: 45000 թիւրքեր և նրանց թուով 2000 եղկապոսից պատրաստվում են յարձակվել նրանց վրա:

— «Daily News» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է փետրվարի 6-ին, որ Անգլիայի և Աւստրիայի մէջ լինելու դաշնադրութիւնը, թիւրքաց մայրաքաղաքում այս վերջին օրերս խօսակցութեան առարկայ է դարձել: Թիւրքերը այժմ չեն ցանկանում որ օտարները խառնվեն իրանց գործերի մէջ: Նրանք հասկանում են իրանց դրութեան ծանրութիւնը և ցանկանում են շուտով հանգստանալ: Թղթակիցը այն կարծիք է որ եթէ լորդ Բիկօնսֆիլդը վճռել է խառնել Անգլիային պատերազմում, նա երբեք չէ կարող յուսալ որ Աւստրիան դաշնակից լինի նրան: Ներկայումս թիւրքերը միայն այն են ցանկանում որ նրանց միջոց տան շուտով և առանց արգելքի ստորագրել խաղաղութեան վերջնական պայմանները, Կ. Պօլսին սպառնող վտանգից ազատելու համար:

— Պ. Պօլսից իմաց են տալի թէ թշնամութիւնները նորից են սկսվել թէսալիայում:

— Կ. Պօլսից հեռագրում են փետրվարի 1/13-ին թէ Սիրիայի (Ասորեստան) Նօրան և Բօլիս նահանգներում խռովութիւններ եղած են: Կամաւկոսի (Շամ) երեւելի անձերից շատերը աքսորվել են: Սիրիայի նորընտիր կառավարչին հրաման է տրվել որ նոյն օր Կ. Պօլսից գնայ դէպի իր պաշտօնատեղը:

— Օսմանեան պարլամենտի նախագահ Վէֆիկ-փաշան յայտնել է պարլամենտում փետրվարի 12-ին (յունվարի 21) որ եթէ Անգլիայի նաւատորմը Գարդանից անցնէ, կը բողոքէ և դրա հետեանքի պատասխանատուութիւնը կը թողնէ Անգլիայի վրա:

— Անգլիայի ծովային մինիստրութիւնը հրաման է ուղարկել Չատամի նաւարանները որ մշակների աշխատութեան ժամերը աւելացնեն որպէս զի պատերազմական նաւերի շինութիւնը շուտով վերջանայ: «Times» լրագիրը որ խաղաղութեան կողմնակից է, գրում է որ եթէ ռուսները գրաւեն Կ. Պօլսը առանց պայմանաւոր որոշելու, անգլիական կառավարութիւնը պարտաւոր է այն ժամանակ շատ ազդու կերպով գործել:

— Անգլիայի նոր հրատարակված կապոյտ տետրակի մէջ տեսնվում է մի հեռագիր որ Պետերբուրգում անգլիական դեսպան լորդ Լօֆտուս ուղարկել է լորդ Կերբինին փետրվարի 9-ին: Այդ հեռագիրը հաղորդում է Գօրչակով իշխանի պատասխանը զինադադարի վերաբերութեամբ: Գօրչակով իշխանը ասում է որ դեմարկացիակի զինուորական զինք արդէն որոշված է զինադադարի ժամանակ և ռուսական և թիւրքական իշխանութիւնները իրանց մէջ համաձայնված են, Կա մի այնպիսի հարց է որ բա-

ցարձակապէս պատրանում է պատերազմող տէրութիւններին:

— Թիւրքիան պարտաւորվել է, Յունաստանի հետ կապած զինադադարի պայմանների համաձայն, չը յարձակվել Կրիտէ կղզու ապստամբների վրա:

— Ֆրանսիան և Իտալիան հրաժարվել են նաւատորմներ ուղարկելուց դէպի Գարդանի, տեսնելով որ Կ. Պօլսում խաղաղութիւն է տիրում: Աւստրիան էլ առ այժմ նրանց օրինակին է հետեւում:

— Օսմանեան պետական խորհուրդի նախագահ Սէրվէր-փաշան հրաժարվել է իր պաշտօնից, պատճառելով թէ ինքն չուարել մնացել է և չէ կարող խմանալ թէ ինչ ընթացք հարկաւոր է ռուսնայ տէրութեան թէ ներքին և թէ արտաքին գործերում:

— Յունաստանի մինիստրութեան նախագահ Պ. Կրոմօդուրօս յայտնել է խորհրդարանին թէ կաբինէտը յետ է կանչել զօրաբանակը որ անց էր կացել օսմանեան սահմանագիծից, որպէս զի երաշխաւոր տէրութիւնների պաշտպանութիւնը վայելէ: Խորհրդարանը գոհ է եղել այդ բացատրութիւնից:

— «Polit. Correspond.» լրագիրը յայտնում է թէ մեծ պատրաստութիւններ են տեսնվում Կ. Պօլսի Գօլմա-Բաղլէի պալատում ուր Սուլթանը պէտք է տեսնվի Նօրին Կայսերական Բարձրութեան Նիկօլայ Մեծ իշխանի հետ:

— Նիւ-Սօրբից հեռագրում են փետրվարի 9-ին (յունվարի 28) թէ Հարաւային Ամերիկայում մեծ երկրաշարժ է եղել և Լիմա և Գուայակիլիլ քաղաքները գրեթէ ամբողջապէս հիմնաքանդ են եղել:

— Լորդ Կերբին ասել է լորդերի խորհրդարանում փետրվարի 8-ին (յունվարի 27) թէ անգլիական նաւատորմի օսմանեան ջրեր գնալու ոչ թիւրքիային քաջակերպ, ոչ էլ Ռուսաստանի դէմ թշնամութիւն ցոյց տալու համար է, այլ Կ. Պօլսում խռովութիւն պատահած ժամանակ քրիստոնեաներին պաշտպանելու համար: Կառավարութիւնը երկու ժամանակից որոշած է մինչև այժմ պահպանած չէղբորութեան պայմաններից չի չեղվի:

— Անգլիայի համայնքների խորհրդարանում Կ. Բօլի յայտնել է որ առանց կառավարութիւնը մտադիր է զինադադարի միջոցին վերցնել Գուայաքերաներում տեղաւորված տօրպէզն երը և ժամանակաւորապէս հսկել դետի նաւազնացութեան վրա:

— Համայնքների խորհրդարանում Նօրվոտ, Ֆինանսների մինիստրը, յայտնել է թէ Անգլիայի քաղաքականութիւնը երբեք նպատակ կունենայ պաշտպանելու համար կօնֆէդէրացիայում: 1-ն Կարդանիեան նեղուցի անցքը ազատ թողնել ամեն տէրութիւնների վաճառականական նաւերի համար և չը թողալորի որ մի տէրութիւն միայն բացարձակ իրաւունք ունենայ այդ նեղուցով ազատ կերպով անցնել: 2-դ. Թիւրքիայի հպատակներին ապահովացնել որ աւելի լաւ կերպով կառավարվեն: 3-դ. Չը թողալորի որ եղկապոսի կողմից յարձակում լինի Հնդկաստանի դէմ:

— Թէսալիայի առժամանակեայ կառավարութիւնը մի արդէս է ուղարկել յունաց կառավարութեան: Այդ աղբյւրով խնդրում է թէսալիային Յունաստանի հետ միասնաբար մայր-հայրենիքի օգնութիւնը և պաշտպանութիւնը թէսալիացիների համար, որոնք պատրաստ են այդ նպատակի համար ամեն զոհաբերութիւնների:

— Փարիզից հաղորդում են, որ մարշալ Մակ-Մարտի հրաժարվելը ստորագրել Վիկտօր Հիւգօյի տալու Legion d'honneur պատուանշանի վկայականը: Այս բանը բացատրվում է նրանով, որ Վիկտօր-Հիւգօն իր «Մէկ յանցանքի պատմութիւն» հեղինակութեան մէջ խայտառակում է մարշալին:

ՄԾԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՅՑ

10/10/05, փետրվարի 17 (մարտի 1) «Times» լրագրին հեռագրում են Սան-Ստեֆանօյի փետրվարի 15/27: Երեկվայ վեց ժամ տեղի խորհրդածութիւնը ռուսաց և թիւրքաց հաւատարմատարների մէջ աննշան հետեանք ունեցած: Ընդունվեցաւ միայն զերիների փոխանակելու պայմանը: Ռուսաստանը համաձայն չէ, որ կօնգրէսը կազմվի իսլաւ-

դական պայմանները ստորագրելուց առաջ: «Daily Telegraph» լրագրին հեռագրում են Վիեննայից փետրվարի 16/28 հետեւալը: Ռուսները դեռ ևս մտադիր են մննել Կ. Պօլս, եթէ մինչև անգամ Բ. Գուաք չը համաձայնվի: Բրիտանական կառավարութիւնը յայտնեց իշխան Գօրչակովին, որ նա յետ կը կանչէ լորդ Լօֆտուս դեսպանին, եթէ ռուսները կը մննեն Կ. Պօլս:

4. 10/10/05, 15/27 փետրվարի: Հաւատարմատարները ընդունեցին պայմանների այն կէտը, որ վերաբերում է Բօլգարիային: Բօլգարիայի սահմանները չեն որոշված: Հրահանգներ չունենալու պատճառով: Ընդունվեց նոյնպէս պայմանների այն կէտը, որ վերաբերում է Չերնօգօրիային: Վերջինի սահմանների որոշումն կը քննէ եւրոպական յանձնաժողովը: Բանակցութիւնները դանդաղ են առաջ գնում: Կարծում են, որ Ռուսաստանը մի քանի օրից յետոյ կը պահանջէ խաղաղական պայմանների ստորագրելու:

ՓԱՐԻԶ, փետրվարի 17 (մարտի 1): Այստեղ սաստիկ յուզված են: Օսմանեան տոկոսներ թղթերի տէրերը յայտնում են, որ ի նկատի ունենալով Թիւրքիայի անանկութիւնը, Ռուսաստանը իրաւունք չունի պահանջել պատերազմական վարձատրութիւն, որ իսկապէս Թիւրքիայի պարտատէրերի վրա կընկնի: Թիւրքաց թղթերի տէրերը պատրաստում են բողոք կօնֆէդերացիային ներկայացնելու:

10/10/05, փետրվարի 18 (մարտի 2): Բրիտանական նաւատորմի բիւրօէտը անցեալ տարվանից 85,000 ֆունտ ստերլինգով աւելացրած է: Այդ գումարից 42,000 ֆունտ ստերլինգ զօրքերը տեղափոխելու և պատերազմական այլ պիտոյքների համար է նշանակած: Մտադրութիւն կայ դարձեալ չորս առաջնակարգ զբաւար նաւեր շինել:

10/10/05, փետրվարի 17 (մարտի 1): Լօրդերի ժողովում մինիստր Կերբին ասաց ընտեղիք ունեմ մասծեւու, որ էգուց խաղաղական պայմանները կը ստորագրվեն: Ինձ շատ տեղերից հասնում էին, ինչպէս կարծում են, ճշմարիտ լուրեր, որ Ռուսաստանը հրաժարվում է Թիւրքիայի նաւատորմը պահանջելուց:

ՎԻԵՆԱ, փետրվարի 17 (մարտի 1): «Polit. Corr.» լրագրին հաղորդում են Սերաւիօից, որ մահմեդական բէգերի և բօսնիացի կաթօլիկների մի պատգամաւորութիւն է գնացել Վիեննա: Կատարօից հաղորդում են, եթէ կարելի է որ Թիւրքիայի և Չերնօգօրիայի դեմարկացիօնական գծի որոշելու համար եղած բանակցութիւնները ընդմիջվեն:

10/10/05, փետրվարի 18 (մարտի 2): «Times» լրագրին հեռագրում են Գալիպօլից, որ Կարդանիլ նահանգապետ սերասկերից հրաման ստացաւ չը թողնել այլ ևս ոչ մէկ օտար նաւ Մարմարեան ծովը: Բէյսերի ընկերութեանը հեռագրում են Կ. Պօլսից, որ բրիտանական նաւատորմը երեկ կուղևորվել Եգիպտոս:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, փետրվարի 19 (մարտի 3): Նօրին Բարձրութիւն Գլխաւոր Հրամանատարը պաշտօնապէս հեռագրում է Սան-Ստեֆանօյի փետրվարի 19 (մարտի 3) երեկոյեան 5 ժամին հետեւալը: «Եգիպտոս» են շնորհաւորել Չերի ՄԵՏՈՒԹԻՆԸ խաղաղական պայմանների ստորագրելու: Աստուած մեզ օջողեցրեց, Թագաւոր, վերջացնել Ձեր սկսած մեծ և սուրբ գործը: ձորաերի ազատման օրը Գուգ ազատեցիք քրիստոնեաներին մահմեդական լուծից: Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, փետրվարի 19 (մարտի 3): «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ գիւշերվայ 9 ժամին, երբ ժողովուրդը լսեց խաղաղութեան պայմանների ստորագրելու լուրը, նա շքեղապատեց ձմեռային պալատը և ողբերկով ողջունեց Կայսրին անվերջանալի աղաքանկրով: Երբ Թագաւորը դուրս եկաւ և ժողովուրդը նրան տեսաւ: Հազարաւոր ամբողջ յայտնելով իր հիացումն, սկսեց երգել ժողովուրդական հիմն:

ГОДЪ ТРЕТІИ.

Иногородные адресуют свои требования исключительно: *в Баку в редакцию Бакинских Известий.*

1-10

ԵՂՐԱՐՔ Ն. Գ. ՏԻՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ
Ս. ՏԻՐ-ԻՍՐԱՅԻԼԵԱՆ

Ներկայ տարվայ փետրվարի 15-ից մինչև մարտի 20 Արծրունու գալլէքէայի ներքին յարկում, Առփլասի նահանգական պատերազմական շտաբի մօտ կը ծախվէն ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՊՏՂԱՏՈՒ ծառեր իՕՍԵՑ ԵԱԿՈՎԼԵՎԻԶ ԻԼԼԵԱՇԵՎԻԶԻ ՂԱՐԱՅԱԶԻ ԿԱԼՈՒԱԾԻՑ: ԻՆԷ կարչինց մինչև մէկ սաժէն մեծութեան ծառերը արժեն իւրաքանչիւրը 35 կոպ.: Ծառերը պատահարած են եւրօպական ԱՄԵՆԱԳԵԼԵՑԻԿ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ, որոնց հաւանութիւն է տուել վիէննայի աշխարհաճոգի Պօմօլօգիական կօնգրէսը:

1—2 (փետրվ. 28)

Молодой человекъ желаетъ имѣть частныя уроки. Приготовляетъ дѣтей въ первый, второй и третій классы гимназій. Адресъ можно узнать въ редакціи „Мшакъ“.

4-8

Ուշիարովի գրքերի խանութում ծախվում է
(Թիֆլիսի հնութաբանների նկարագրութիւնը) հեղ.
Պատօն Իօսեփանի, գինը 50 կ. 2—4

Ի նկատի ունենալով այն խնդիրները, որոնք տրվում են մնացած ղեկ ՉԲ ԾԱԽԿԱՆ ՂԱՐԱՍԱՅԻ ՀՈՂԵՐԸ ԳՆԵԼՈՒ սրանով յայտնվում է, որ այժմ Ղարաչխազի առաջին մասում գտնված կառավարչի 16,000 ԳԵՍԵԱՏԻՆ ՀՈՂԻՑ, չեն ծախվել Հստեեալ մասները, որոնք ջրվեժու Համար շատ յարմար են: ԾԱԽԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՒ ՄԱՍՆԵՐԻ ԳԻՆԻ ՆՈՅՆ ԵՆ ՄՆՈՒՄ, ԻՆՉ ՈՐ ԱՌԱՅ: Յանկազողները գնել այդ հողերը կամ ծախելու պայմանների մանրամասնությունը իմանալ, կարող են դիմել ընկերություն խորհուրդի կանցելարին, Գանձակի փողոցի վրա, տուն ՁԵ 7, կամ Ղարաչխազի կառավարչի կառավարիչ Իվան Ստեփանյանի Խառնաօկն, Թիֆլիսում, Լաբարատորի փողոցը, տուն ՁԵ 15:

3	Ջրանցքի վրա մատը № 5	14 դե.
4	» » » №№ 6, 7, 8 և 9	15 »
5	» » » » 10, 11, 12, 13, 14 և 15	547 »
6	» » » » 18 և 20	100 »
7	» » » » 27	51 »
9	» » » » 41	131 »
10	» » » » 47	50 »
11	» » » » 53 և 58	170 »
14	» » » » 81, 82, 83, 84, 85 և 86	584 »
15	» » » » 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94 և 95	950 »
16	» » » » 101, 102 և 103	450 »
17	» » » » 110, 111, 112, 113, 114 և 115	750 »
	Ջանդարի Ջրանցքի վրա 104, 105, 106 և 107	500 »

բոլոր. . . . 4784 .

1 փետրվ. (20 փետրվ.)

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգեւոր Դը-
պրոցում Հոգաբարձական (սորհրդարանի մէջ)
առաջինկայ մարտ ամսոյ 8-ին, երեկոյեան 7
ժամին, կը լինի աճրբախօսութիւն (առանց
կրկնաճրբատնօթեան) կապալով տալու հան-
գեցեալ Վրիդոր Երեզկանցից ընտյառ
կրպակի իր նկուղով, որ գտնուում է Հայոց,
նոյն է, միջին փողոցումը: Պայմանաթուղթը
(գծադրեալ) կարելի է կարդալ Հոգաբարձու-
թեան Վիսանաթան մէջ ամեն օր, բայցի
կիրակեցեյ և տօնօրէր, ցերեկեակ 10-ից մինչե
12 ժամ:

**Լաւ տեսակից վաճառվում է թէ ՀԱՏՈՎ եւ
ԹԵՄ ՄԵՍ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲԸ Յանկագողները
կարող են սեանել Միքայէլեան կամուրջի վրա
Լօգո՞ծ հիւրանոցի տակ, Մուրադովների խա-
նութուն**

2—(3)

ԳՐՈՐԱԿԱՍԱՐԻ ԵՐ ՀԱՇՈՒՆԳՈՒՆ

Փորձված վաճառականական գործերում, գիտե
նարկոր լեզունները, ցանկանում է տեղ ունե
աւ, թէ վաճառականի մօտ եւ ի՞նչ տրիչ ծառայ
ութեան մէջ. Գաղարկաւ եւ քաղաքացի դուրս
տալայի, չառջէն. «Մակի» խմբագրատուն:

Опытный, как по операционной, так и по письменной части. Знает необходимые языки, читать мбсто, согласен и на выезд. Адрес: Редакция газеты „Мшак“

3-5

Итальянской породы, *вполнѣ* здоровыя, продаются въ Кавказскомъ Обществѣ Сельскаго Хозяйства, по 30 коп. за золотникъ, отъ 10 до 50 золотниковъ съ одиѣ ружья.

2-3

Խմբագիր — հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ